

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2019թ. սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

ք. Վանաձոր

Նիստը նախագահում էր հոգաբարձուների խորհրդի նախագահ, Դիանա Տեր-Ստեփանյանը, քարտուղարում՝ Խորհրդի քարտուղար ՎՊՀ պատմության ամբիոնի դոցենտ Ս. Աղաջանյանը:

Հիմք ընդունելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՎՊՀ) հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 21-րդ կետը (Խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով)՝

Օրակարգում դրված էր երկու հարց.

Օրակարգում՝

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հենակետային վարժարանի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն ցուցակի հաստատում:
2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքում փոփոխության կատարում (Ֆիզիկայի ամբիոնի ժամանակավոր լուծարում և հաստիքները Մաթեմատիկայի ամբիոն տեղափոխում):

Օրակարգի հարցերը էլեկտրոնային փոստով ուղարկվել է Խորհրդի բոլոր 23 անդամներին (քվեաթերթիկի նմուշը կցվում է):

ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ՝

անուն, ազգանուն

ստորագրություն

Անցկացման ամսաթիվ՝ « 17 » սեպտեմբերի 2019թ.	Վերադարձման վերջնաժամկետը՝ «23» սեպտեմբերի 2019թ. ժամը՝ 12 ⁰⁰
<p style="text-align: center;">ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հաստատել ՎՊՀ հենակետային վարժարանի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն ցուցակը: 2. ՎՊՀ Ֆիզիկայի ամբիոնը ժամանակավորապես լուծարել և հաստիքները միացնել մաթեմատիկայի ամբիոնին: 	

Հոգաբարձուների խորհրդի նախագահի առաջարկով օրակարգի առաջին հարցի քվեարկությունն առկախվեց, մինչև ԿԳՍՄ նախարարության կողմից ուսուցիչների աշխատավարձի բարձրացման վերաբերյալ պաշտոնապես շրջաբերական նամակի ստացումը:

Երկրորդ հարցի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 23 անդամներից 14-ը:

Քվեարկության արդյունքները. կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3, անվավեր՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՎՊՀ գիտական խորհրդի 2019թ. սեպտեմբերի 5-ի թիվ 9 նիստի որոշումը, ՎՊՀ հիմնադրամի Ֆիզիկայի ամբիոնը ժամանակավորապես լուծարել և հաստիքները տեղափոխել մաթեմատիկայի ամբիոն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Դ. ՏԵՐ-ՍԵՓԱՆՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ԱՂԱԶԱՆՅԱՆ